

իրականության մեջ վերոյիշեալ մետա-բարոյագիտական (Meta-Ethics) դրոյթը, իր վերլուծական փորձով եւ անկէ՝ երկու կանոններու հետեւութեամբ, չի ցոլացներ մեր բարոյական արտայայտութիւնները՝ իր ամբողջական իմաստով: Ասոր կողքին, յարաբերապաշտական բնոյթ կրող մետա-բարոյագիտական դրոյթը եւ երկու կանոնները եթէ մանրակրկիտ զննուին, ի յայտ կու գայ, որ անոնք, իրար հետ խոտոր կը համեմատին, այլ խօսքով՝ անհամատեղելի են, որովհետեւ յիշեալ երկու կանոնները, բարոյագիտական որեւէ կանոնի նման հարկադրաբար ընդհանրական չեն, այսինքն՝ ընդունելի չեն բոլորին կողմէ:

Գ.- Ոչնչապաշտութիւն

Ոչինչ (լատ.՝ nihil) արմատէն յառաջացած այս բառը ունի հակաճառական իմաստ եւ կը մատնանշէ գոյութիւնը, իմացութիւնը եւ բարոյական ու դրական արժէքները ընդհանրապէս ժխտող փիլիսոփայական ուղի մը:

Վերոյիշեալ բնորոշումով *ոչնչապաշտութիւնը*⁽⁴⁸⁾ (Nihilism) ընդհանրապէս, կը հակաճառէ մարդկային կեանքի եւ աշխարհի գոյութեան իմաստին, կը հակաճառէ ճանաչելի իրողութիւններու իմացութեան, ինչպէս նաեւ՝ ընկերութեան մեջ ընդունուած բարոյական զանազան կանոններուն ու դրական արժէքներուն: Այլ խօսքով, դրական բոլոր արժէքները, այստեղ, արժեզրկուած են:

Դ.- Սխալականութիւն

Բարոյախօսներու համար մտահոգութեան առարկայ է այն պատկերացումը, որ բարոյագիտութեան հիմնաւորումը, կրնայ սխալ սկզբունքներ ունենալ: ... Եւ, իրականութեան մեջ, բարոյագիտութեան հիմնաւորման ծրագրերու պարագային կարելի է հաստատել *բարոյական սխալական* եւ *բարոյական անսխալական* մտապատկերներ: Արդարեւ, բարոյագիտութեան հիմնաւորման ծրագրերու թէ՛ տրամաբանական հետեւութեան (Deduction, ընդհանուրէն՝ դէպի մասնակին) եւ թէ՛ տրամաբանական մակածութեան (Induction, մասնակիէն՝ դէպի ընդհանուրը) զոյգ պարագաներուն՝ *սխալականութիւնը* (Fallibilism), այսինքն՝ սխալ սկզբունքներու գոյութիւնը, կրնայ դիւրութեամբ ապացուցելի ըլլալ:

Վերոյիշեալ սխալականութիւնը շատ ակնյայտ մտահոգիչ կը դառնայ, ո՛չ թէ անոր համար, որ բարոյագիտութեան հիմնաւորում մը կրնայ *բարոյական սխալական* սկզբունքներ ունենալ, այլ անոր համար, որ կարելի չէ փաստել, որ տուեալ բարոյագիտական հիմնաւորումը, *բարոյական անսխալական* սկզբունքներ ունի:



(48) **Ոչնչապաշտութեան** (Nihilism) մասին, տե՛ս նաեւ՝ Բարոյագիտութեան հիմնական հասկացութիւններ, Մաս – 9, Էջ 512: